"Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոն" աշխատանքային նախագծի

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Փետրվար, 2020թ.

Պատվիրատու
ՀՀ պետական եկամուտների կոմիտե

"Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոն"

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շինարարական
ծրագրերի համակարգման բաժնի պետ _____ Ն. Մնոյան

"____"_____ 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ....4
2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ....4
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ....5
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ..5
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ....8
5.1 Նախատեսվող գործունեության հողատարածքը....10
5.2 Կենտրոնի կառուցման և տեխնիկական բնութագրերը....10
5.3 Աշխատանքների իրականացման ժամանակացույցը....14
5.4 Թափոնների և այլ նյութերի կառավարում....15
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ....15
6.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը....15
6.2 Տարածաշրջանի երկրաբանությունը....16
6.3 Հիդրոերկրաբանություն....17
6.4 Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ....18
6.5 Տարածաշրջանի հողերի նկարագիրը....19
6.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները....20
6.6.1 Ջերմաստիճանը....20
6.6.1 Խոնավությունը....20
6.6.2 Մթնոլորտային տեղումները....21
6.6.3 Քամի 21
6.7 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը....23
6.8 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը....25
6.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը....27
6.10 Պատմամշակութային և բնության հուշարձանները....29
6.11 Ռիսկերի գնահատման մեթոդակարգը....31
6.11.1 Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը....31
6.11.2 Ջրային ռեսուրսների պահանջի և կեղտաջրերի հաշվարկ....32
6.11.3 Կեղտաջրերի հաշվարկ....32
6.11.4 Թափոնների և այլ նյութերի կառավարումը....33
6.11.5 Հողային ռեսուրսներ....34
6.11.6 Կենսաբազմազանության վրա ազդեցությունը....34
6.11.7 Աղմուկի և թրթռման ազդեցությունը....35
6.11.8 Սոցիալական ազդեցությունը....36
6.11.9 Ենթակառուցվածքների վրա ազդեցությունը....36
6.11.10 Հուշարձանների վրա ազդեցությունը և պատահական գտածոները....36
6.11.11 Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը....36
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ....38
Հավելվածների մաս....40

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1	Պատվիրատու՝	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1.2	Ձեռնարկող՝	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1.3	Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Քաղաք Երևան, Մովսես Խորենացի 3, 7
1.4	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնը կառուցվելու է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում՝ Թբիլիսյան խճուղու թիվ 2/14 հասցեում (Նկար 1)
1.6	Ձեռնարկողի հեռախոսահամարը՝	+37460 544444, +37460 544657
1.7	Աշխատանքային նախագծի մշակող՝	"Ատրիում թիմ" ՍՊԸ

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
ՍՊԸ՝ Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՊԵԿ՝ Պետական եկամուտների կոմիտե
ԱՏԳ՝ Արտաքին տնտեսական գործունեություն

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Իրականացվող գործունեության նպատակն է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում կառուցել ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոն (այսուհետ Կենտրոն)։ Կենտրոնը կառուցվելու է Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում գտնվող 21.57 հա մակերեսով հողատարածքի վրա: Վերոնշյալ հողատարածքից Կենտրոնը զբաղեցնելու է 5.8 հա տարածքը: Աշխատանքային նախագիծը մշակվել է "Ատրիում Թիմ" ՍՊԸ-ի կողմից՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ ՊԵԿ) պատվերով։

2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն, քաղաքաշինության բնագավառում՝ 1500 մ^2-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական օբյեկտները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների համար սահմանված ընթացակարգով։

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրութային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականաց-վում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրույթային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դիպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դիպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրակա-նացվում է մինչ լսումները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

"Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի

26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

"ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

"ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

"Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքը (1999 թ, լրամշակվել է 2007 թ.) կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով: Դրանցից են՝ ՀՀ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին" թիվ 192 և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

Օրենսգրքի Գլուխ 6-ը նկարագրում է Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը և դրանց հետ գործածությանը վերաբերվող ընդհանուր դրույթները:

"Բուսական աշխարհի մասին" (1999 թ.) և ***"Կենդանական աշխարհի մասին"*** (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին" թիվ 71-Ն *և* ***"ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին"*** թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

"Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 1270-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Արարատի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

"Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին" թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման նախագիծն իրականացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված նախագծային առաջադրանքի և Գյումրու քաղաքապետարանի կողմից տրված 16.12.2019թ. թիվ 193 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք, տես Հավելված 2) հիման վրա: Աշխատանքների իրականացման վերաբերյալ Գյումրի համայնքի ղեկավարի նախնական համաձայնությունը բերված է Հավելված 5-ում:

Կենտրոնը մասն է կազմում՝ ՀՀ ՊԵԿ 2020-2024թթ. Զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրով նախատեսված Գյումրիում ՀՀ ՊԵԿ Հյուսիսային Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների սպասարկման կենտրոնի, որի նպատակն է՝ մաքսային գործառնությունները դյուրացնելու և արդյունավետությունը բարձրացնելու, առավել որակյալ և ժամանակակից ծառայություններ մատուցելու նպատակով ստեղծել էլեկտրոնային կառավարման համակարգերի և թվային լուծումների վրա հիմնված ԱՏԳ մասնակիցների սպասարկման կենտրոն:

Կենտրոնը կառուցվելու է Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում գտնվող 21.57 հա մակերեսով հողատարածքի վրա: Վերոնշյալ հողատարածքից Կենտրոնը զբաղեցնելու է 5.8 հա տարածքը: Կենտրոնի անշարժ գույքի օգտագործման իրավունքի վկայականը բերված է Հավելված 1-ում:

Նախկինում 21.57 հա տարածքում տեղակայված է եղել տանկային գունդ, 1950-ական թվականներին կառուցված շենքերով և շինություններով: Տարածքը՝ կիսաքանդ շինություններով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հանձնվել է ՀՀ կառավարության 01.08.2019թ.-ի N979-Ա որոշումամբ:

Կենտրոնի տեղակայման արբանյակային քարտեզը ներկայացված է Նկար 1-ում: Նախատեսվող գործունեության տարածքի հատակագիծը՝ որտեղ ներկայացված են նաև կառուցվելիք շինությունները, բերված է Հավելված 3-ում, իսկ իրադրային հատակագիծը բերված է Հավելված 4-ում:

Նկար 1. Նախատեսվող գործունեության տեղակայման արբանյակային քարտեզը

Նախատեսվող գործունեության՝ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի տարածքի հարավ-արևմտյան սահմանը հարում է հիմնական ավտոճանապարհին: Կենտրոնի արևմտյան և արևելյան սահմաններին հարևանում է բնակելի թաղամաս: Հյուսիսային հատվածը չբնակեցված տարածք է: Նախկինում 21.57 հա տարածքում

տեղակայված է եղել տանկային գունդ, 1950-ական թվականներին կառուցված շենքերով և շինություններով: Տարածքը՝ կիսաքանդ շինություններով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հանձնվել է ՀՀ կառավարության 01.08.2019թ.-ի N979-Ա որոշումամբ:

5.1 Նախատեսվող գործունեության հողատարածքը

Կենտրոնի ընդհանուր հողատարածքի մակերեսը 21.57 հա է (կադաստրային ծածկագիր՝ 08-001-0412-0009, Հավելված 1): Աշխատանքային նախագծի համաձայն նախատեսվում է 21.57 հա մակերեսից 5.8 հա-ը օգտագործել նախատեսվող գործունեության իրականացման համար: Նախնական փուլով կառուցապատվելու է 5.8 հա տարածքը, իսկ մնացած 15.77 հա-ի վրա նախատեսվում է կառուցել ԱՏԳ (արտաքին տնտեսական գործունեության) միասնական կենտրոն, որի շինարարությունը նախատեսվում է իրականացնել 3 տարվա ընթացքում:

Նախատեսվող գործունեության տարածքը նախկինում ծառայել է որպես զինվորական գնդի տարածք: Տարածքը՝ կիսաքանդ շինություններով, ՀՀ ՊԵԿ-ին է հանձնվել ՀՀ կառավարության 01.08.2019թ. թիվ 979-Ա որոշմամբ: Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝

- Հողամասի նշանակությունը՝ հատուկ նշանակության է,
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հատուկ նշանակության է,
- Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Կենտրոնի շինարարության նախապատրաստական աշխատանքների ժամանակ իրականացվելու են հողային/փորման, ինչպես նաև տարածքի հարթեցման աշխատանքներ (տես Բաժին 6.11.5): Հողային աշխատանքների ընթացքում ավելորդ գրունտային զանգված չի առաջանալու, քանի որ այդ զանգվածը օգտագործվելու է հետևյան և տարածքի հարթեցման համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության տարածքը երկար տարիներ գտնվել է մարդածին ազդեցության ներքո, կարելի է եզրակացնել, որ նախատեսվող գործունեության տարածքում բուսահողային շերտը բացակայում է:

5.2 Կենտրոնի կառուցման և տեխնիկական բնութագրերը

Կենտրոնը Թբիլիսյան խճուղուց ունի երեք հիմնական մուտք՝ բեռնատար տրանսպորտային միջոցների, թեթև մարդատար տրանսպորտային միջոցների և դեպի ճանապարհային ոստիկանության միջոցառումների գոտի: Տարածքը ֆունկցիոնալ առումով բաժանված է երեք հիմնական գոտիների՝

- բեռնաթափման գոտի,
- թեթև մարդատար տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների գոտի,
- ճանապարհային ոստիկանության գործառույթների գոտի:

Բեռնաթափման գոտում իրականացվելու են կոնտեյներներով և կցասայլերով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների բեռնաթափում, ինչպես նաև զննություն և այլ մաքսային գործառույթներ:

Թեթև մարդատար տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների գոտում սպասարկվելու են Հայաստանի Հանրապետություն ինքնուրույն մուտք գործած տրանսպորտային միջոցները:

Ճանապարհային ոստիկանության գործառույթների գոտում իրականացվելու են մաքսային ձևակերպումներն ավարտած տրանսպորտային միջոցների գրանցման, ինչպես նաև արդեն գրանցված տրանսպորտային միջոցների ներքին շուկայում առուվաճառքի գործառույթներ:

Վարչական շենքում տեղակայված են մաքսային ձևակերպումների սրահը, բանկային, ապահովագրական և բրոկերային ընկերությունները՝ իրենց սպասարկման սրահներով և ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումը՝ իր սպասարկման սրահով:

Ծառայողական շենքը նախատեսված է ժապավենաձև հիմքով, միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքով, պատերը՝ թեթև բետոնե բլոկներով, ջերմամեկուսիչ շերտով, տրավերտինե սալերի երեսապատումով: Կենտրոնն ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, հակահրդեհային ջրամատակարարման, արտաքին լուսավորության, անձրևաջրերի հեռացման, տեղեկատվական և արտաքին տեսահսկման համակարգերով և ցանցերով: Կենտրոնն ունի առանձին տրանսֆորմատորային ենթակայան՝ երկու սնուցման ուղղությամբ, դիզելային գեներատոր 400 ԿՎԱ հզորությամբ, հակահրդեհային և խմելու ջրի պոմպակայան, երկու հակահրդեհային և մեկ խմելու ջրի ջրավազաններ:

Սպասարկող ծառայությունների ("Վիոլա ջուր" ՓԲԸ, "Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ, "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ) կողմից տրված տեխնիկական պայմանների համաձայն՝ կենտրոնի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև անձրևաջրերի հեռացման համակարգերը միացվելու են Գյումրի քաղաքի ջրամատակարարման, ջրահեռացման և անձրևաջրերի հեռացման համակարգերին: Անձրևաջրերի հեռացման համար գործունեության տարածքում նախատեսվում է կառուցել հեղեղատար ցանց, որը միացվելու է քաղաքային ցանցին: Էլեկտրամատակարարումը իրականացվելու է տարածքում առկա տրանսֆորմատորային ենթակայանից: Գազամատակարարումը իրականացվելու է քաղաքային միջին ճնշման գազատարից:

Բեռնատար տրանսպորտային միջոցների մուտքի ճանապարհը և բեռնաթափման հարթակը իրականացվել են 26 սմ հաստության բետոնե սալով, իսկ մարդատար տրանսպորտային միջոցների մուտքի և ելքի ճանապարհն ու ավտոկայանատեղերը նախատեսված են ասֆալտբետոնե ծածկույթով: Կենտրոնի ավտոկայանատեղերում կարող է կայանել շուրջ 600 մեքենա:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացվելու են բարեկարգման/կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատման մակերեսը կազմում է 1500 մ^2: Բարեկարգման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է 1500 մ^2 մակերեսով տարածքը պատել սիզամարգերով: Բարեկարգման/կանաչապատման աշխատանքների իրականացման նպատակով այլ վայրից բուսահող չի բերվելու, քանի որ օգտագործվելու են գլորված սիզամարգեր, որոնք բերվելու են գլանափաթեթներով՝ պատրաստի հողային շերտով: Կանաչապատ տարածքի ոռոգումը իրականացվելու է ցողունային ոռոգման համակարգով: Ոռոգումը իրականացվելու է ըստ սեզոնի և ըստ պահանջի:

Կենտրոնի գոտիները առանձնացված են սիզամարգերով: Կենտրոնի շահագործմամբ կապահովվի շուրջ 200 լրացուցիչ աշխատատեղ և էական դերակատարում կունենա Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական

վիճակի բարելավման ուղղված միջոցառումներում: Կենտրոնն իր ենթակառուցվածքներով հնարավորություն ունի մաքսազերծել օրական մինչև 1000 տրանսպորտային միջոց:

Նախատեսվող գործունեության ընթացքում իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են ստորև Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Կենտրոնի կառուցման համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Չափման միավորը	Ծավալը
I. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԱՍ			
I.1	Ավազակոպիճ	մ³	4979.23
I.2	Խիճ	մ³	10431.3
I.3	Բիտումով տոգորված խիճ	մ³	1020
I.4	Խոշորահատիկ ասֆալտաբետոն	տ	4155.4
I.5	Մանրահատիկ ասֆալտաբետոն	տ	2396
I.6	Բետոն B30	մ³	5266
I.7	Ամրան A500C	տ	36
I.8	Բետոնե հատակի սալիկներ 6 սմ հաստ	մ²	1229
I.9	150x300 մմ բազալտե եզրաքարեր	գծմ	1205
I.10	80x200 մմ բետոնե եզրաքարեր	գծմ	502
II. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՇԵՆՔԵՐ			
II.1	Բետոն B7.5	մ³	466
II.2	Բետոն B25	մ³	1273
II.3	Ամրան AcI	տ	159.4
II.4	Ամրան A500C	տ	175.7
II.5	Իզոգամ	մ²	5137
II.6	Պողպատե անկյունակ 63, 80, 125	տ	103.8
II.7	Պողպատե երկտավր 35, 45	տ	76.4
II.8	Պողպատե թիթեղ 8,12,16,20 մմ հաստ.	տ	41.1
II.9	Սենդվիչ 120 մմ պատերի	մ²	1493
II.10	Սենդվիչ 120 մմ տանիքի	մ²	3915
II.11	Կերոգրանիտե սալիկներ	մ²	2606
II.12	Լամինատե հատակ	մ²	866
II.13	Կերամիկական սալիկներ	մ²	197
II.14	Բազալտե սալիկներ	մ²	579
II.15	Գիպսաստվարաթուղթ հրակայուն	մ²	11087
II.16	Գիպսաստվարաթուղթ ջրակայուն	մ²	2258
II.17	200 մմ բետոնե բլոկ	մ³	39.7
II.18	100մմ բետոնե բլոկ	մմ	13.2
II.18	Ալիկաբոնդ	մ²	265

№	Անվանումը	Չափման միավորը	Ծավալը
II.20	Հանքային բամբակ 80 մմ	մ²	2966
III. ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՇԵՆՔ			
III.1	Բետոն B7.5	մ³	106
III.2	Բետոն B25	մ²	494
III.3	Ամրան AcI	տ	2.6
III.4	Ամրան A500C	տ	50
III.5	Իզոգամ	մ²	1382
III.6	Պողպատե անկյունակ 63,80,125	տ	24.607
III.7	Պողպատե երկտավր 35,45	տ	21.71
III.8	Պողպատե թիթեղ 8,12,16,20 մմ հաստ.	տ	10.488
III.9	Սենդվիչ 120մմ պատերի	մ²	127.6
III.10	Սենդվիչ 120մմ տանիքի	մ²	1010
III.11	Կերոգրանիտե սալիկներ	մ²	309
III.12	Կերամիկական սալիկներ	մ²	58
III.13	Բազալտե սալիկներ	մ²	1400
III.14	Գիպսաստվարաթուղթ հրակայուն	մ²	1924
III.15	Գիպսաստվարաթուղթ ջրակայուն	մ²	689
III.16	200մմ բետոնե բլոկ	մ³	17.4
III.17	Հանքային բամբակ 80մմ	մ²	768
IV. ԲՆԱԿԵԼԻ ՍԱՄՆԱՇԵՆՔ			
IV.1	Բետոն B7.5	մ³	103
IV.2	Բետոն B25	մ³	1551
IV.3	Ամրան AcI	տ	30
IV.4	Ամրան A500C	տ	187
IV.5	100մմ բետոնե բլոկ	մ³	283.5
IV.6	200մմ բետոնե բլոկ	մ³	379.5
IV.7	Լամինատե հատակ	մ²	1709
IV.8	Կերոգրանիտե սալիկներ	մ²	1337
IV.9	Կերամիկական սալիկներ	մ²	1166
IV.10	Բազալտե սալիկներ	մ²	340
IV.11	Տրավերտինե սալիկներ	մ²	891.5
V. ԱՆՋՐԵՎԱՏԱՐ ԿՈՅՈՒՂՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑ (ՆԵՐՏԱՐԱԾՔԱՅԻՆ)			
V.1	Կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր խողովակներ SN8 Փ200մմ	գծմ	390
V.2	Կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր խողովակներ SN8 Փ250մմ	գծմ	460
V.3	Կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր խողովակներ SN8 Փ300մմ	գծմ	158
V.4	Կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր խողովակներ SN8 Փ350մմ	գծմ	45
V.5	Կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր խողովակներ SN8 Փ400մմ	գծմ	52
V.6	Կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր խողովակներ SN8 Փ300մմ	գծմ	502
VI. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑ (ՆԵՐՏԱՐԱԾՔԱՅԻՆ)			

№	Անվանումը	Չափման միավորը	Ծավալը
VI.1	Պոլիէթիլենային ճնշումային խողովակներ PE100/PN10/Φ110մմ	գծմ	460
VI.2	Պոլիէթիլենային ճնշումային խողովակներ PE100/PN10/Φ90մմ	գծմ	400
VI.3	Պոլիէթիլենային ճնշումային խողովակներ PE100/PN10/Φ25մմ	գծմ	250
VII. ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ			
VII.1	Ոռոգման համակարգի պոլիվինիլքլորիդե խողովակ PE32 Φ50	գծմ	60
VII.2	Ոռոգման համակարգի պոլիվինիլքլորիդե խողովակ PE32 Φ40	գծմ	80
VII.3	Ոռոգման համակարգի պոլիվինիլքլորիդե խողովակ PE32 Φ32	գծմ	150
VII.4	Ոռոգման համակարգի պոլիվինիլքլորիդե խողովակ PE32 Φ25	գծմ	250
VII.5	Ոռոգման համակարգի պոլիվինիլքլորիդե խողովակ PE32 Φ20	գծմ	250
VIII. ՀՐԴԵՀԱՍԱՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑ (ՆԵՐՏԱՐԱԾՔԱՅԻՆ)			
VIII.1	Պոլիէթիլենային ճնշումային խողովակներ PE100/PN10/Φ160 մմ	գծմ	1020
VIII.2	Պոլիէթիլենային ճնշումային խողովակներ PE100/PN10/Φ110 մմ	գծմ	140
VIII.3	Պոլիէթիլենային ճնշումային խողովակներ PE100/PN10/Φ90 մմ	գծմ	200
IX. ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑ			
IX.1	Պողպատյա գազախողովակ Մ 108x4.0 մմ	գծմ	3
IX.2	Պողպատյա գազախողովակ Մ 57x3.5 մմ	գծմ	224
IX.3	Պողպատյա գազախողովակ Մ 45x3 մմ	գծմ	28
IX.4	Պողպատյա գազախողովակ Մ 40 մմ	գծմ	44.2
IX.5	Պողպատյա գազախողովակ Մ 25 մմ	գծմ	35.2
IX.6	Պողպատյա գազախողովակ Մ 20 մմ	գծմ	354
X. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ/ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			
X.1	Բարեկարգման/կանաչապատման աշխատանքներ՝ սիզամարգերի տնկում	մ^2	1500

Ինչպես նշվեց, նախատեսվող գործունեության ընդհանուր մակերեսը 5.8 հա է: Աշխատանքային նախագծի համաձայն շին. հրապարակում նախատեսվում է շին. տեխնիկայի կայանման համար հատկացնել առանձին տարածք: Նախատեսվող գործունեության տարածքում տեղադրվելու են նաև ժամանակավոր շարժական տնակներ՝ շին. կազմակերպությունների ինժեներատեխնիկական, բանվորական կազմի սպասարկման, ինչպես նաև օգտագործվող շինարարական նյութերի պահեստավորման համար:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են բեռնատար ինքնաթափեր, էքսկավատորներ, ավտոկռուններ, տոփանող, ասֆալտ տեղադրող և ջրցան մեքենաներ:

5.3 Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

Նախատեսվող աշխատանքների իրականացման ժամանակացույցը բերված է ստորև Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

№	Հիմնական աշխատանքները	Ժամանակացույցը ըստ ամիսների			
		1	2	3	4
I	Ճանապարհային մաս				
II	Վարչական և այլ շենքեր				
III	Պահեստային շենք				
IV	Բնակելի մասնաշենք				
V	Անձրևատար կոյուղու արտաքին ցանց (ներտարածքային)				
VI	Ջրամատակարարման արտաքին ցանց (ներտարածքային)				
VII	Կաթիլային ոռոգման համակարգ				
VIII	Հրդեհամարման արտաքին ցանց (ներտարածքային)				
IX	Գազամատակարարման ցանց				
X	Բարեկարգման/կանաչապատման աշխատանքներ				

5.4 Թափոնների և այլ նյութերի կառավարում

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա կենտրոնի կառուցման ընթացքում՝ շինարարական աղբն է (ծածկագիր 9120060001000)՝ մոտ 12000 տ քանակությամբ: Շինարարական աղբը նախատեսվող գործունեության տարածքից պարբերաբար հեռացվելու և բեռնատար մեքենաներով տեղափոխվելու է Գյումրու քաղաքային աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

6.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: Քաղաքը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում, Ախուրյան գետի ձախ ափին, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում՝ ծովի մակարդակից 1475-1605 մ նիշերի վրա: Քաղաքն ունի աշխարհագրական հարմար դիրք, որն ակոսվում է Չերքեզի, Ջաջուռի և այլ ձորերով: Ռելիեֆը հարթավայրային է, ծածկված լճագետային և հրաբխային շուրջ 350 մ խորության նստվածքներով:

Տարածաշրջանի ռելիեֆ բաժանվում է երկու մասի: Հրաբխային, որն ընդգրկում է Ջավախք-Աշոցքի տարածաշրջանը, իր մեջ ընդգրկելով Ջավախքի և Եղնախաղի լեռնավահանները, Չլդրի լեռները և Աշոցքի սարահարթը, մյուս մասն իր մեջ ներառում է Շիրակի ծալքաբեկորավոր լեռնաշղթան ու Շիրակի դաշտը:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը տեղադրված է էրոզիոնահողմնահարման

լանջերի և հարավային սարավանդի սահմաններում: Ռելիեֆը մանր բլրային է, առանձին դեպքերում հարթ, աննշան թեքությամբ դեպի հյուսիս-արևելք: Շրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են չորրորդականի հասակի հրաբխային տուֆերը, բազալտները, անդեզիտաբազալտները և դացիտային լավաները, ծածկված ժամանակակից ալյուվիալ, էլյուվիալ-դելյուվիալ, դելյուվիալ-պրոլյուվիալ և էլյուվիալ առաջացումներով՝ ավազային, կավային և խոշորաբեկորային գրունտներով:

6.2 Տարածաշրջանի երկրաբանությունը

Տարածաշրջանում մերկացած հնագույն գրունտները ներկայացված են ստորին չորրորդականի մեծ հզորությամբ (200-350 մ) կանաչավուն, պլաստիկ, թույլ կրացված լճային կավերի շերտախմբով, որոնք երբեմն հերթափոխվում են 15-18 մ հզորությամբ դիատոմային կավերով և խճա-կոպճային նստվածքների բավականին հզոր ոսպնյակներով: Լճային կավերը ծածկված են միջին չորրորդականի ալյուվիալ-պրոլյուվիալ և լճաալյուվիալ նստվածքներով՝ կրացված, խոշոր ծակոտկեն ավազակավերով, կավավազներով, ավազներով և խճակոպճային նստվածքներով, որոնց հզորությունը դեպի արևելք աստիճանաբար մեծանում է մինչև 25-30մ: Տարածաշրջանի հարավային մասերում, որտեղ կավավազային նստվածքները լվացված են, մերկացած են այդ համալիրի ստորին մասը ներկայացնող ավազները: Սրանք տարահատիկ են, խճի և կոպճի պարունակությամբ: Ավազների հզորությունը հասնում է մինչև 12 մ: Այս շերտախմբի վրա միջին չորրորդականի իգնիմբրիտային տուֆերի ծածկն է, որի հզորությունը հյուսիսում հասնում է 10-12 մ: Տուֆերի ծածկի թեքությունը հյուսիսից հարավ է: Կտրվածքի վերևից տուֆերը աղյուսակարմիր են, դեպի ներքև՝ շագանակագույն, հետո սև: Երբեմն նրանք ջրատար են:

Տուֆերի վրա նստած են վերին չորրորդականի ծակոտկեն, լյոսատիպ, տարբեր չափի կարբոնատացված (2.5-46%) կավավազները, ավազակավերը և հազվադեպ՝ կավերը խճի և կոպճի պարունակությամբ: Կարբոնատը, կրային կուտակումները կոնկրեցիաների և սպիտակ գույնի փոշային կուտակումների ձևով վերնստել են հյուսիսային և հյուսիսարևելյան կողմերից գոգավորությունը շրջապատող լեռնաշղթաների հողմահարման, մեծ մասամբ հորդ սելավային ջրերի ու գետերի կողմից տեղափոխման և ըստ խորության ու տարածման անհավասար վերնստման հետևանքով: Այդ պատճառով այս գրունտները խիստ անհամասեռ են, փոքր տարածքներում կարող են հերթափոխվել նրանց տեղ-տեղ կրային, լյոսանման, նստվածքային և ոչ նստվածքային տարատեսակները: Ժամանակակից նստվածքները ներկայացված են Ախուրյան գետի և նրա վտակների ալյուվիալ նստվածքներով՝ ավազախճակոպճային նստվածքներով, ավազների և կավավազների շերտիկներով ու ոսպնյակներով:

Շիրակի մարզի կենտրոնական և հարավային հատվածում տարածվում է Շիրակի դաշտը, իսկ հյուսիսային շրջանում՝ Աշոցքի սարահարթը, միաժամանակ Շիրակի մարզում են տարածվում Փամբակի, Բազումի լեռնաշղթաների, Եղնախաղի, Ջավախքի, Արագածի լեռնազանգվածների մի մասը:

Տարածաշրջանի հարավային մասը զբաղեցնում է Շիրակի դաշտը, հյուսիսը՝ Աշոցքի սարահարթը, որոնք իրարից բաժանվում են Շիրակի լեռնաշղթայով: Հարավում տարածվում է Թալինի սարավանդը, հյուսիս-արևելքում՝ Շարայի լեռը: Արևելքում Ջաջուռի (1952 մ) ու Քարարխաչի (2273 մ) լեռնանցքներով շրջանը կապվում է Լոռու ֆիզիկաաշխարհագրական շրջանին: Նախատեսվող գործունեության

տարածաշրջանին մոտ գտնվում են Փամբակի և Շիրակի լեռնաշղթաները (տես Նկար 2-ը)։ Մակերևույթն անտառազուրկ է, բնորոշ են հրաբխային կոներն ու լավային հոսքերը։



Նկար 2. Նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը լեռնաշղթայի համակարգում

6.3 Հիդրոերկրաբանություն

Ռելիեֆի, կլիմայի և ջրաերկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների շնորհիվ Շիրակի մարզի տարածքն աչքի է ընկնում համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանցով։ Մարզի գետային ցանցը գրեթե ամբողջությամբ պատկանում է Արաքս գետի ավազանին։ Տարածքում կազմավորվում և սկիզբ է առնում Ախուրյան գետը՝ Կարախան, Գյումրի, Կարկաչուն, Աշոցք վտակներով։ Արագածի լանջերի բազմաթիվ աղբյուրներից սկզբնավորվում և Ախուրյանի վտակներին են միախառնվում Մանթաշ, Գեղաձոր և այլ գետակներ։ Ախուրյան գետը համարվում է Շիրակի մարզի ջրային հիմնական զարկերակը։ Այն Արաքսի ձախակողմյան վտակն է և սկիզբ է առնում Արփի լճից։ Մոտ 70 կմ երկարությամբ, գետն ամբողջովին հոսում է մարզի տարածքով, որից հետո միջին և ստորին հոսանքներում սահմանային գետ է դառնում Թուրքիայի և Հայաստանի միջև։

Ախուրյանի տարածքում, կախված տուֆերի նկատմամբ ունեցած իրենց դիրքից, կա գրունտային ջրերի երկու հորիզոն՝ վերտուֆային և ստորտուֆային։ Վերտուֆային ջրատար հորիզոնը կապված է վերին չորրորդականի շերտախմբի կտրվածքում ավազային, մանրախճային և խճային շերտերի ու ոսպնյակների հետ։ Այդ հորիզոնի համար որպես ջրամերժ հորիզոն հանդիսանում են տուֆերը։ Վերտուֆային ջրատար հորիզոնի հզորությունը 2.5-5.0մ է։

Մակերևութային և մթնոլորտային ջրերի մեծ մասը թափանցում է տուֆերի տակ տեղադրված տարահատիկ ավազների, մասամբ խճի և կավավազների մեջ, առաջացնելով ստորտուֆային ջրատար հորիզոնը, որի համար որպես ջրամերժ շերտ են հանդիսանում լճային կավերը: Այս հորիզոնն ավելի ջրառատ է, ունի մինչև 15 մ հզորություն:

Գրունտային ջրերը սնվում են Շիրակի գոգավորությունը շրջապատող լեռնաշղթաներից, գետերի ստորհունային ջրերից, ժամանակավոր ջրահոսքերից, մթնոլորտային տեղումներից և ոռոգման ցանցի ֆիլտրացիոն կորուստներից: Նրանց սնման հիմնական աղբյուրը շրջապատող լեռնաշղթաների հյուսիս-արևելյան և արևելյան մասերն են: Մթնոլորտային տեղումներից նրանց ամենաինտենսիվ սնումը ներծծման միջոցով սկսվում է մարտի երկրորդ կեսից: Գրունտային ջրերի սնման գործում մեծ դեր են խաղում արհեստական ուղիները: Գետերից ոռոգման նպատակով վերցված ջրերի մոտ 28%-ը թափանցում է գրունտային ջրերի մեջ: Ջրերի քիմիական կազմը հիդրոկարբոնատա-կալցիումա-նատրիումային է, հազվադեպ՝ սուլֆատա-հիդրոկարբոնատա-մագնիումա-կալցիումային:

6.4 Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ

Տարածաշրջանի ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից (համեմատած հանրապետության տարածքի հետ) գտնվում է բարձր սեյսմիկ ռիսկի գոտում: Շիրակի մարզի հյուսիսը մտնում է 8-9, իսկ կենտրոնն ու հարավը՝ 9 բալ և ավելի ուժգնություն ունեցող սեյսմիկ գոտիներում: Նրա տարածքում և շրջակայքում երկրաշարժային հայտնի էպիկենտրոններ են հանդիսանում Գյումրին, Սպիտակը, Անին, Կարսը, Ախալքալաքը: Գյումրի քաղաքը գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Վերջին ուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 1988թ. դեկտեմբերի 7-ին: Ստորև Նկար 3-ում ներկայացված է սեյսմիկ և սելավային ռիսկերի գոտիներում նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը:



Նկար 3. Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերը

6.5 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Շիրակի մարզում առանձնացվում են հողերի տարածման հետևյալ հիմնական գոտիները՝

Լեռնաշագանակագույն հողեր - տարածվում են մարզի հարավում, նախալեռնային գոտու չոր տափաստաններում, Արագածի ցածրադիր լանջերից մինչև Ախուրյան գետի հովիտը՝ 1450-1600 մ բարձրությունների սահմաններում: Զևավորվում են շոգ և համեմատաբար չոր կլիմայական պայմաններում: Հումուսի պարունակությունը կազմում է 3-4%:

Լեռնատափաստանային սևահողեր - սրանք տարածվում են մարզի 1500-2200 մ, երբեմն մինչև 2400-2500 մ բարձրությունները, ընդգրկում են Շիրակի և Աշոցքի սարահարթերի մեծ մասը և դրանք եզերող նախալեռնային և միջին բարձրության գոտիները: Հողի վերին շերտը հումուսացված է, հումուսի պարունակությունը հասնում է 4-5%-ից մինչև 10-11%, իսկ սևահողերի միջին հզորությունը՝ 50-65 սմ:

Լեռնային, մարգագետնատափաստանային հողեր - տարածվում են սևահողերից վեր 2200-ից մինչև 2600-2700 մ բարձրություններում: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%:

Լեռնային մարգագետնային հողեր - տարածված են մարգագետնատափաստանային հողերից վեր: Հողաշերտի հզորությունը փոքր է. վերին մասերում այն հազիվ հասնում է 15-20 սմ-ի: Լեռնամարգագետնային հողերը ծածկված են բարձրորակ արոտներով:

Ստորև Նկար 4-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրի հողերի կատեգորիան:



Նկար 4. Նախատեսվող գործունեության վայրի հողերի կատեգորիան

6.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Գյումրի քաղաքը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևմուտյան մասում, Ախուրյան գետի ձախ ափին, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում՝ ծովի մակարդակից 1475-1605 մ նիշերի վրա: Շիրակի մարզը հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը: Կլիմայի ձևավորման հիմնական գործոններից են հյուսիսային և հյուսիս-արևմտյան օդային հոսանքները, որոնք նպաստում են ցուրտ եղանակի ձևավորմանը:

6.6.1 Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -36 °C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 38 °C, ամենատաք ամիսների (հուլիս-օգոստոս) միջին ջերմաստիճանը՝ 19.5 °C:

Աղյուսակ 3. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Գյումրի	-9	-7.2	-1.2	6.7	11.7	15.5	19.5	19.5	15.2	8.5	1.7	-5.1	6.3	-36	38

6.6.1 Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 72%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 71%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 39%:

Աղյուսակ 4. Օդի հարաբերական խոնավությունը, %

Բնակավայր, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան,%	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա %
Գյումրի	83	82	76	68	69	66	62	60	63	70	75	84	72	71	39

6.6.2 Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 498 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 90 մմ, նվազագույնը հունվար ամսին՝ 23 մմ:

Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տևանօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավել- լագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
Գյումրի	23	25	30	55	90	71	46	36	31	39	28	24	498	61	94	129
	17	26	24	30	53	55	40	47	64	39	25	32	64			

6.6.3 Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված են Նկար 5-ում:

Քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հուլիս ամսին արևելյան ուղղությամբ և կազմում է 2.2 մ/վ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը գրանցվել է հուլիս ամսին և կազմում է 2.1 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 1.3 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (≥15 մ/վ) 30-ն է:

Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են Նկար 6-ում: Ինչպես երևում է Նկար 6-ից դիտարկվող տարածքում գերակշռում են հյուսիս-արևելյան ուղղությամբ քամիները: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս հյուսիս-արևելյան ուղղությամբ և կազմում է 39%:



Նկար 5. Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Նկար 6. Քամու ուղղությունների կրկնելիությունը

6.7 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում են ՀՀ Շիրակի ֆլորիստիկական շրջանում: Շիրակի մարզում բուսական աշխարհը խիստ բազմազան է, որին նպաստել են բարձրությունների մեծ տարբերությունները, լեռնալանջերի տարբեր կողմնադրությունները և մակերևույթի թեքությունները:

Շիրակի մարզում կան շուրջ 40 հազվագյուտ և անհետացող բուսատեսակներ, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում: Տարածքի բուսականությունը պատկանում է հիմնականում տափաստանային տիպին, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը՝ տարախոտա-հացազգի խոտաբույսերի տարածմամբ: Տարածաշրջանում առկա են հացահատիկային զանազան խոտաբույսերի ֆորմացիաներ:

Լեռնային տափաստանները ներկայացված են երեք՝ փետրախոտային (Stipa), շյուղախոտային (Festuca) և ցորնուկային (Bromus) տափաստանների ֆորմացիաներով:

Ոչ անտառածածկ հողերը նախկինում ծածկված են եղել անտառներով, որի վկայությունն է թփային մացառների առկայությունը:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող բուսատեսակների ցանկը ներկայացված է ստորև Աղյուսակ 6-ում: Դրանցից որոշների լուսանկարները բերված են Նկար 7-ում:

Աղյուսակ 6. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները

№	Բուսատեսակներ	
	Հայերեն	Լատիներեն
1	Բարդի	Populus
2	Ակացիա	Robinia
3	Թխկի	Acer
4	Թթենի	Morus
5	Վայրի ծիրանենրի	Armeniaca
6	Սզնի	Crataegus
7	Ուռատերև տանձենի	Pyrus salicifolia
8	Սովորական հացենի	Fraxsinus excelsior
9	Աղեղնաեզր ասպիրակ	Spiraea crenata
10	Արևելյան ծորենի	Berberis orientalis
11	Սովորական չմենի	Cotoneaster integerrima
12	Վրացական ցախակեռաս	Lonicera iberica
13	Սովորական լեռնաչամիչ	Ephedra procera
14	Թփային հասմիկ	Jasminum fruticans
15	Թեղի	Ulmus

№	Բուսատեսակներ	
	Հայերեն	Լատիներեն
16	Ալուչա	Prunus
17	Փշատենի	Elaeagnus
18	Ուռենի	Salix
19	Մասրենի	Rosa canina

Արևելյան ծորենի - Berberis orientalis

Փշատենի - Elaeagnus

Թփային հասմիկ - Jasminum fruticans

Վրացական ցախակեռաս - Lonicera iberica

Թթենի - Morus

Բարդի - Populus

Ուռատերև տանձենի - Pyrus salicifolia

Մասրենի - Rosa canina

Նկար 7. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող բուսատեսակների լուսանկարները

Ինչպես նշվեց, նախատեսվող գործունեության վայրը գտնվել և շարունակվում է գտնվել բազմամյա մարդածին ազդեցության ներքո, ուստի կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չկան:

6.8 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը

Աշխարհագրական դիրքի առումով Շիրակի մարզն ընկած է Կովկասյան և Փոքրասիական կենդանաաշխարհագրական մարզերի միջև: Կենդանական աշխարհի բազմազանությունն կապված է բուսականության բազմազանությամբ: Նկարագրվող տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային, բարձր լեռնային լայն տարածված կենդանական ձևերով: Այն ներկայացված է ընտանի կենդանիների, թռչունների վերարտադրությամբ: Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դոդոշների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ: Լայնորեն տարածված կենդանատեսակներից այստեղ հանդիպում են. կաթնասուններից՝ նապաստակ (Lepus europaeus), աղվես (Vulpes vulpes), գայլ (Canis lupus) և մի շարք կրծողներ:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 7-ում, իսկ դրանց որոշների լուսանկարները՝ Նկար 8-ում:

Աղյուսակ 7. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները

№	Կենդանատեսակ	
	Հայերեն	Լատիներեն
1	Մողես	Lacerta armeniaca
2	Դալի մողես	L. dahli
3	Վալենտինի մողես	Darevskia valentini
4	Նաիյան մողես	L.nairensis
5	Հայկական իժ	Vipera raddei
6	Տափաստանային իժ	V. erivanensis
7	Խայտաբղետ իժանման սահնօձ	Coluber ravergieri
8	Նապաստակ	Lepus europaeus
9	Աղվես	Vulpes vulpes
10	Գայլ	Canis lupus
11	Դաշտամուկ	Microtus arvalis
12	Կանաչ դոդոշ	Pseudepidalea viridis

Վալենտինի մողես - Darevskia valentini

Մողես - Lacerta armeniaca

Նապաստակ - Lepus europaeus

Դաշտամուկ - Microtus arvalis

Կանաչ դոդոշ - Pseudepidalea viridis

Հայկական իժ - Vipera raddei

Նկար 8. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակներից որոշների լուսանկարները

Ինչպես նշվեց, նախատեսվող գործունեության վայրը գտնվել և շարունակվում է գտնվել բազմամյա մարդածին ազդեցության ներքո, ուստի կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենադանատեսակներ չկան։

6.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը

<u>Գյումրի</u>

Մակերեսը՝ 4429.5,

Բնակչությունը՝ 157332 մարդ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ,

Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 125 կմ։

Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրասպառվածության պայմաններով համայնքը գտնվում է տնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված գոտում: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում է "Շիրակջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի կողմից: Ջրամատակարարման համար օգտագործվում և նախատեսվում է օգտագործել Վերին Ախուրյանի հանքավայրի և Գյումրու իջվածքի ստորգետնյա ջրերը:

Էլեկտրամատակարարում

Գյումրի համայնքի էներգահամակարգը կառավարվում է "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ընկերության կողմից: Գոյություն ունեցող ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը 685 մվտ է: Գյումրի համայնքի գազամատակարարումը իրականացվում է "Գազպրոմ - Արմենիա" ընկերության կողմից "Գյումրի-1" և "Գյումրի-2" ավտոմատ գազաբաշխիչ կայաններից, որոնց ընդհանուր հզորությունը 230 հազ.խմ ժամ է: 2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Գյումրիում գազաֆիկացվել է 37680 բնակարան, այդ թվում՝ 20187 բազմաբնակարան շենք և 17493 առանձնատուն:

Աղբահանություն և սանիտարահիգիենիկ պայմաններ

Համայնքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 650000 մ^2: Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպվում են քաղաքապետարանի աշխատակազմի կողմից: "Կոմպասս" գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն հասարակական կազմակերպությունը 2016 թվականին իրականացրել է «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն որակյալ կոմունալ ծառայությունների Գյումրիում" ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է աղբահանության և լուսավորության ոլորտների մոնիթորինգ, բյուջետային հետազոտություն և սոցհարցում:

Տրանսպորտ

Գյումրի համայնքն ու նրան հարող տարածքները գտնվում են տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Գյումրիով է անցնում Վրաստանի, Ռուսաստանի (Երևան-Գյումրի-Վանաձոր-Թբիլիսի-Բաթումի-Փոթի, նաև դեպի Մոսկվա) և Թուրքիայի հետ կապող երկաթուղիները: Գյումրին ունի շահագործվող տեխնիկական բավարար մակարդակ և թռիչքների մեծացման հնարավորություն ունեցող միջազգային նշանակության օդանավակայան: Զարգացած է նաև ավտոմոբիլային ճանապարհների ցանցը: Գյումրու միջով անցնում է Մայիսյան- Բավրա-Վրաստան, Գյումրի-Կարս, Գյումրի-Վանաձոր-Իջևան-Ադրբեջան սահմանների միջպետական նշանակության ավտոճանա-պարհները: Համայնքի արևմտյան հատվածներով անցնում են Երևան-Արմավիր-Անի-Պեմզա-Գյումրի, Գյումրի-Ամասիա-Պաղակն հանրապետական նշանակության ճանապարհները: Համայնքը շրջակա բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:

Կրթություն

Համայնքում գործում են կրթական հաստատություններ, որից՝

- ԲՈՒՀ-եր - 10-ը՝ 1674 (գյումրեցի) ուսանող, 842 աշխատատեղ,
- քոլեջներ - 4-ը՝ 1055 սովորող, 218 աշխատատեղ,
- ուսումնարաններ - 3-ը՝ 716 սովորող, 152 աշխատատեղ,
- վարժարաններ - 4-ը՝ 1650 աշակերտ, 227 աշխատատեղ,

- ավագ դպրոց - 7-ը՝ 1703 աշակերտ, 297 աշխատատեղ,
- միջնակարգ դպրոցներ - 4-ը՝ 1210 աշակերտ, 203 աշխատատեղ,
- հիմնական դպրոցներ - 24-ը՝ 9930 աշակերտ, 1410 աշխատատեղ,
- հատուկ դպրոցնններ - 1-ը՝ 55 աշակերտ, 58 աշխատատեղ:

Վերը նշված հաստատությունները հանդիսանում են հանրապետական և մարզային ենթակայության կառույցներ: Համայնքում գործում է համայնքային ենթակայության 24 մանկապարտեզ, որից 3-ը գործում է տնակային պայմաններում: "Արևիկ" մանկապարտեզի գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է՝ պայմանավորված հիմնանորոգման աշխատանքների կատարումով:

Մշակույթ

Համայնքում գործում է 7 գրադարան: 2016թ.-ին համայնքապետարանի գրադարաններում առկա գրքերի քանակը կազմում է 148 հազ. կտոր: Ընթերցողների թիվը ընթացիկ տարվա 3 եռամսյակում կազմել է 48821 մարդ: Համայնքում գործում է 7 թանգարան, որոնցից 4 -ը՝ համայնքապետարանի ենթակայության տակ են: Դրանք են՝ Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարանը, Ավ.Իսահակյանի տուն-թանգարանը, Մ.Մկրտչյանի թանգարանը, Ասլամազյան քույրերի պատկերասրահը: Համայնքի թանգարանային հավաքածուներում 2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ընդգրկված է 4520 ցուցանմուշ: Համայնքում գործում է երաժշտական և արվեստի 7 դպրոց: Համայնքապետարանի ենթակայության տակ գործում է երաժշտական 6 դպրոց՝ 1310 աշակերտով: Այդ դպրոցներն իրականացնում են արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն: Համայնքի տարածքում գործում է "Զբոսայգիներ և պուրակներ" ՀՈԱԿ՝ 5 աշխատակցով:

6.10 Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ Կառավարության 2004թ. սեպտեմբերի 9-ին թիվ 1270-Ն որոշմամբ հաստատված՝ Շիրակի մարզի հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Գյումրու տարածքում կան թվով 27 միավոր պատմամշակույթային հուշարձաններ, որոնք ներկայացված են ստորև Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Գյումրու պատմամշակութային հուշարձանները

Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական
Ամրոց "Ալեքսանդրապոլ" ("Մեծ")	1835-1845 թթ.	Հարավ-արևմտյան մասում	Հ
Ամրոց "Սև բերդ" ("Հարավային")	19 դ.		Հ
Ամրոց "Կարմիր բերդ" ("Հյուսիսային", "Փոքր")	19 դ.		Հ
Արգելոց "Կումայրի"	Ք.ա. 3 հզ - Ք.հ. 21 դ.	քաղաքի մեջ	Հ
Բնակատեղի "Կումայրի"	Ք.ա. 2-1 հազ.	"Կումայրի" տուրիստական հանգրվանի բակում	Հ

Բնակատեղի "Սև Բերդ"	Ք.ա. 3-1 հազ.	"Սև բերդ" ամրոցի մոտ	Չ
Գերեզմանոց	19-20 դդ.	քաղաքի հվ մասում	Չ
Տեքստիլ գործարանի համալիր	1920-30-40-ական թթ.	Նժդեհի փող.	Չ
Դամբարանադաշտ	Ք.ա. 3 հազ.	"Կարմիր բերդ" վայրում	Չ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ. անտիկ	"Վարդբաղ" վայրում	Չ
Եկեղեցի	7 դ.	"Գումայրի" տուրիստական հանգրվանի բակում	Չ
Երկաթգծի համալիր	1897-1902 թթ.	աե մասում	Չ
Երկաթգծի հանգուցային հիվանդանոցի շենք	1926 թ.	Սևյան փող. 71	S
Զբոսայգի Շահումյանի անվան	1880-ական թթ.	Ջիվանու փող.	Չ
Զորակայան "Կաբարդինսկի"	19 դ.	Կարմիր բանակի խճուղի	Չ
Զորակայան "Կազաչի Պոստ"	19 դ.- 20 դ. սկիզբ	"Կազաչի պոստ" վայրում	Չ
Զորակայան "Սիվիրսկի"	19 դ.	Ղարսի խճուղի	Չ
Զորակայան "Պոլիգոն"	19 դ.	Շիրակացու փող.	Չ
Հուշարձան Ավ. Իսահակյանին	2003 թ.	Ավ. Իսահակյանի անվան դպրոցի բակում	S
Հուշարձան "Մայր Հայաստան"	1975 թ.	քաղաքի հվ մասում	Չ
Շենք N 2 հիվանդանոցի	1930-ական թթ.	Մազմանյան փող. 3	Չ
Շենք Սևյանի անվան մշակույթի պալատի	1930-ական թթ.	կայարանամերձ հրապարակում	Չ
Որմնանկարներ	1970-ական թթ. սկիզբ	Աստղի հրապարակ, էլեկտրատեխնիկական գործարանի ճաշարանի շենքում	Չ
Որմնանկարներ	1970-ական թթ. սկիզբ	"Ստրոյմաշինա" գործարանի ճաշարանի շենքում	Չ
Որմնանկար	1970-ական թթ. սկիզբ	Աճեմյանի անվան թատրոնի ճեմասրահում	Չ
Որմնանկար	1970-ական թթ. սկիզբ	Ռեզիստորների "Օմեգա" գործարանի մասնաշենքում	Չ
Գուլպայի ֆաբրիկայի համալիր	1950-ական թթ.	Անկախության հրապարակ	Չ

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ին թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, նախատեսվող գործունեության տարածքում երկրաբանական հուշարձաններ չկան։

6.11 Ռիսկերի գնահատման մեթոդակարգը

Նախատեսվող գործունեության հետևանքով առաջացած ռիսկերի գնահատումը իրականացվում է Ասիական Զարգացման Բանկի կողմից մշակված՝ ռիսկերի գնահատման մեթոդակարգի համաձայն:

Ըստ այդ մեթոդակարգի՝ սոցիալական և շրջակա միջավայրի վրա ռիսկերի ազդեցության գնահատումը իրականացվում է երկու հարաչափերի արտադրյալի միջոցով, որի արդյունքում որոշվում է ռիսկի ազդեցության աստիճանը: Այդ հարաչափերն են՝

1) հավանականություն
2) հետևանք

Հարաչափերը գնահատվում են 1, 2, 3, 5 գնահատականներով: Բազմապատկման արդյունքում ստացված թիվը բնութագրում է ռիսկի աստիճանը՝

- 15-25 (բարձր աստիճանի ռիսկ)
- 6-10 (միջին աստիճանի ռիսկ)
- ≤ 5 (ցածր աստիճանի ռիսկ):

6.11.1 Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը

Կենտրոնի կառուցման աշխատանքների իրականացման ընթացքում մթնոլորտային արտանետումները առաջանում են հիմնականում շարժական աղբյուրներից (mobile polluter), իսկ արտանետումների տեսակը մերձգետնյա է (արտանետման աղբյուրի բարձությունը չի գերազանցում 2 մ-ը), այսինքն այն չի կարող ցրվել համեմատաբար մեծ հեռավորությունների վրա: Հարկ է նշել, որ բետոնե հատակի, պատերի և այլնի կառուցման համար անհրաժեշտ բետոնե խառնուրդը շին.հրապարակում չի պատրաստվելու: Այն արդեն իսկ պատրաստի վիճակում բերվելու է Գյումրու բետոնահանգույցից՝ բետոնախառնիչ մեքենայով: Բետոնախառնիչ մեքենայի օգտագործումը զգալի կերպով կնվազեցնի օդի աղտոտվածությունը՝ բացառելով տեղում բետոնե խառնուրդի պատրաստումից փոշու առաջացումը:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումներն ամփոփված են ստորև Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Մթնոլորտային օդի վրա ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները, առաջարկվող մեղմացնող և կանխարգելիչ միջոցառումները

Մթնոլորտային օդ				
Հավանա-կանություն (A)	**Հետևանք (B)**	**Ազդեցության գնահատում (A) * (B)**	**Ազդեցության աստիճան**	**Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ**
5	1	5	ցածր	• Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող շին. տեխնիկա, բեռնատար մեքենաներ և գործիքներ • Օրվա ընթացքում շին.հրապարակի պարբերաբար ջրում

				• Շինանյութերի ծածկում անջրաթափանց թաղանթով • Տեղանքում շինարարական նյութերի և թափոնի բաց այրման արգելում • Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում

6.11.2 Ջրային ռեսուրսների պահանջի և կեղտաջրերի հաշվարկ

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, շին.հարթակների ջրցանի համար ջրապահանջը կազմում է՝

Hշ=0.4 մ³/օր:

Ինժեներատեխնիկական աշխատողների և բանվորների (այդ թվում վարորդների) խմելու և սանիտարահիգիենիկ կարիքների համար անհրաժեշտ ջրապահանջը կազմում է՝

Wկս=0.15 մ³/օր:

Այսպիսով, նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ ընդհանուր ջրօգտագործումը կկազմի՝

0.4+0.15=0.55 մ³/օր:

Նախատեսվող գործունեության տարածքը նախկինում հանդիսացել է որպես զինվորական գունդ և ապահովված է ջրով, սանիտարահիգիենիկ կառույցներով, որտեղից օգտվելու են կապալառուի աշխոտողները՝ իրենց սանիտարահիգիենիկ կարիքները հոգալու համար:

Շինարարության ընթացքում փոշու առաջացումն և տարածումն կանխելու կամ նվազեցնելու նպատակով օգտագործվելու են ջրցան մեքենաներ: Ջրցանի համար օգտագործվող ջուրը վերցվելու է նախատեսվող գործունեության տարածքի մոտակա ոռոգման համակարգից և շին. հրապարակ է բերվելու ջրցան մեքենաներով:

6.11.3 Կեղտաջրերի հաշվարկ

Շինարարական հարթակների ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու և կոմունալ տնտեսական ջրօգտագործման արդյունքում: Կորուստը կազմում է 1.5%, այստեղից կեղտաջրերը կազմում են՝ **0.15 · 0.985 = 0.14 մ³/օր**:

Նախատեսվող գործունեության՝ ջրային ռեսուրսների վրա ազդեցության գնահատման արդյունքները ամփոփված են ստորև Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Ջրային ռեսուրսների վրա ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Ջրային ռեսուրսներ				
Հավանա-կանություն (A)	**Հետևանք (B)**	**Ազդեցության գնահատում (A) * (B)**	**Ազդեցության աստիճան**	**Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ**
1	1	1	ցածր	Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում

6.11.4 Թափոնների և այլ նյութերի կառավարումը

Կենտրոնի կառուցման ընթացքում առաջացող հիմնական թափոնատեսակը շինարարական աղբն է (ծածկագիր 91200600 01 00 0)՝ մոտ 20 տ քանակությամբ, որը շինարարական աշխատանքների ընթացքում կտեղափոխվի Գյումրու աղբավայր: Շինարարական և կենցաղային աղբը հավաքվելու են իրարից առանձին: Գյումրու համայնքի աղբահանող կազմակերպության հետ կնքվելու է պայմանագիր՝ կենցաղային և շինարարական աղբի հավաքման և քաղաքային աղբավայրում տեղադրման համար:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում փորվելու է մոտ 20000 մ^3 ծավալով հող, որը ամբողջությամբ օգտագործվելու է հետլցման և տարածքի հարթեցման աշխատանքներում: Հողաթմբերը՝ ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու նպատակով, ծածկվելու են անջրաթափանց բրեզենտե ծածկույթով:

Շինարարության ընթացքում կիրառվող նյութերը մատակարարվելու են Գյումրու մասնագիտացած շինարարական բազաներից՝ անմիջապես օգտագործումից առաջ: Նախատեսվող գործունեության տարածքում նավթամթերք չի պահվելու, քանի որ շահագործվող տեխնիկան և տրանսպորտը լիցքավորվելու են մոտակա բենզալցակայանից: Սորուն առաջացնող նյութերը ծածկվելու են բրեզենտով կամ ՊՎՔ թաղանթով: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում առաջացող թափոնների վերահսկման միջոցառումներն ամփոփված են ստորև Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Թափոնների ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Թափոններ				
Հավանա-կանություն (A)	**Հետևանք (B)**	**Ազդեցության գնահատում (A) * (B)**	**Ազդեցության աստիճան**	**Ազդեցության մեղմացմանը նկանխարգելմանը միտված միջոցառումներ**
5	1	5	ցածր	• Փորված գրունտի օգտագործում, որպես լցանյութ • Առանձին հավաքել շինարարական և կենցաղային աղբը • Կնքել պայմանագիր Գյումրու քաղաքի աղբահանող կազմակերպության հետ՝ կենցաղային և շինարարական աղբի հավաքման և քաղաքային աղբավայրում տեղադրման համար

6.11.5 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փորվելու է մոտ 20000 մ³ ծավալի հող: Հանված հողային զանգվածը ամբողջությամբ օգտագործվելու է տեղում՝ փոսորակների հետլցման և փորված տարածքների հարթեցման համար: Փորված հողը հողաթմբի տեսքով պահվելու է նախատեսվող գործունեության տարածքում: Հողաթմբերը՝ ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու նպատակով, ծածկվելու են անջրաթափանց բրեզենտե ծածկույթով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ հողային ռեսուրսների վրա ազդեցության գնահատման արդյունքները ամփոփված են ստորև Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Հողային ռեսուրսների վրա ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Հողային ռեսուրսներ				
Հավանա-կանություն (A)	**Հետևանք (B)**	**Ազդեցության գնահատում (A) * (B)**	**Ազդեցության աստիճան**	**Ազդեցության մեղմացմանը նկանխարգելմանը միտված միջոցառումներ**
5	1	5	ցածր	• Աշխատանքների ավարտից հետո տարածքի հարթեցում և բարեկարգում • Ծածկել հողաթմբերը անջրաթափանց բրեզենտե ծածկույթով • Յուղի արտահոսքի արդյունքում հողի աղտոտումից խուսափելու համար շինարարական մեքենաների տեխ. սպասարկումը իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում

6.11.6 Կենսաբազմազանության վրա ազդեցությունը

Նախատեսվող գործունեության վայրը երկար տարիներ գտնվել է մարդածին ազդեցության ներքո: Ուստի նախատեսվող գործունեությունն չի կարող ազդել տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա:

Նախատեսվող գործունեության՝ կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման արդյունքները ամփոփված են ստորև Աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13. Կենսաբազմազանության վրա ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Կենսաբազմազանություն				
Հավանա-կանություն (A)	**Հետևանք (B)**	**Ազդեցության գնահատում (A) * (B)**	**Ազդեցության աստիճան**	**Ազդեցության մեղմացմանը նկանխարգելմանը միտված միջոցառումներ**
1	1	1	ցածր	Աշխատանքների իրականացման ընթացում չօգտագործել արգելված թունաքիմիկատներ

6.11.7 Աղմուկի և թրթռման ազդեցությունը

Կենտրոնի կառուցման աշխատանքները կուղեկցվեն կիրառվող շինարարական տեխնիկայից աղմուկի և թրթռումների անջատումներով: Շինարարական աշխատանքները տարածքում և մոտակա շրջակայքում քաղաքի բնականոն ֆոնային աղմուկի արհեստական բարձրացման պատճառ չեն հանդիսանա: Ինչպես նաև, հաշվի առնելով որ աշխատանքները կարճաժամկետ են և կատարվելու են օրվա ցերեկային ժամերին, կարելի է եզրակացնել, որ աղմուկի գործող սահմանային թույլատրելի մակարդակների (տես Աղյուսակ 14-ը) գերազանցում չի դիտվի: Ինչ վերաբերվում է առաջացող թրթռումներին, ապա դրանք կարող են ազդել միայն բանվորական անձնակազմի վրա՝ բավականին կարճ ճամանակահատվածում և չեն կարող էական բացասական ազդեցություն թողնել նրանց կյանքի և առողջության վրա: Հարկ է նշեկ նաև, որ մոտակա բնակավայրի հեռավորությունը նախատեսվող գործունեության տարածքից 20 մ է (Հավելված 4):

Աղյուսակ 14. Աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակները (ՍԹՄ)

№	Սենքերիկի սահմանային թույլատրելի մա	Ջայնի համարժեք մակարդակները, դԲԱ	Ջայնի առավելագույն մակարդակները, դԲԱ
1	Աշխատատեղ	80	
2	Բնակելի շենքերին, պոլիկլինիկաների, հանգստյան տների, պանսիոնատների, տուն-ինտերնատների, մանկապարտեզների, դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների, գրադարանների շենքերին անմիջապես հարող տարածքներ	55	70

Աշխատանքների իրականացման ընթացքում շին. տեխնիկայի շահագործումից արձակվող աղմուկի մակարդակը դժվար թե գերազանցի 80 դԲԱ թույլատրելի մակարդակը: Նշված 80 դԲԱ գերազանցման դեպքում աշխատողներին կտրվեն "բերուշի" տեսակի ականջակալներ: Նախատեսվող գործունեության հետևանքով աղմուկի առաջացման ազդեցության գնահատման արդյունքներն և առաջարկվող մեղմացնող միջոցառումներն ամփոփված են ստորև Աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15. Աղմուկի և թրթռման առաջացման ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Աղմուկ և թրթռում				
Հավանա-կանություն (A)	**Հետևանք (B)**	**Ազդեցության գնահատում (A) * (B)**	**Ազդեցության աստիճան**	**Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ**
5	1	5	ցածր	• Կանգնեցնել շինարարական աշխատանքները գիշերային ժամերին • Շինարարական տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում • Աշխատողների համար աղմուկի մակարդակը պետք է պահպանվի 80 dB (A)-ից ցածր: Այս արժեքը գերազանցելու դեպքում աշխատողներին պետք է տրամադրվեն հատուկ պաշտպանիչ ականջակալներ

6.11.8 Սոցիալական ազդեցությունը

Սոցիալական ազդեցության տեսանկյունից նախատեսվող գործունեությունը միանշանակ դրական է: Ինչպես նշվել է, Գյումրիում նախատեսվում է կառուցել ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոն, որի նպատակն է՝ մաքսային գործառնությունները դյուրացնելու և արդյունավետությունը բարձրացնելու, առավել որակյալ և ժամանակակից ծառայություններ մատուցելու նպատակով ստեղծել էլեկտրոնային կառավարման համակարգերի և թվային լուծումների վրա հիմնված ԱՏԳ մասնակիցների սպասարկման կենտրոն՝ ավտոմեքենաների մաքսային ձևակերպման գործառույթները զետեղելով մեկ վայրում: Կենտրոնն իր ենթակառուցվածքներով հնարավորություն կունենա մաքսազերծել օրական մինչև 1000 տրանսպորտային միջոց: Բացի այդ կստեղծվեն շուրջ 150 աշխատատեղեր:

6.11.9 Ենթակառուցվածքների վրա ազդեցությունը

Նախատեսվող գործունեության գծային ենթակառուցվածքները պատկերված են իրաղրային հատակագծի վրա (տես Հավելված 4-ը): Դրանք են՝ գոյություն ունեցող օդային գծերը, Մ-7 Սպիտակ-Գյումրի միջպետական ավտոճանապարհը և երկաթուղու գիծը: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է մի փոքր ծանրաբեռնվի միայն Մ-7՝ դեպի նախատեսվող գործունեության վայր տանող ճանապարհը ավտոճանապարհը, սակայն դա խոչընդոտ չի հանդիսանա ավտոճանապարհով երթևեկելու համար:

6.11.10 Հուշարձանների վրա ազդեցությունը և պատահական գտածոները

Հաշվի առնելով այն փաստը, որ նախատեսվող գործունեության տարածքը երկար տարիներ գտնվել է մարդածին ազդեցության ներքո, կարելի է փաստել, որ տարածքում աշխատանքների իրականացման ընթացքում պատահական գտածոներ չեն կարող լինել: Նախատեսվող գործունեության վայրին մոտ պատմամշակութային հուշարձաններ չկան:

6.11.11 Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը

Շինարարության փուլում Կենտրոնի կառուցման աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

1) Հրդեհի առաջացումը
2) Աշխատողների վնասվածքները
3) Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Նշված հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու և դրանց կանխարգելման համար նախատեսված է՝

- Իրականացնել աշխատանքների և աշխատաքային գոտիների քիմիական և ֆիզիկական ռիսկերի գնահատում (աղմուկ, թրթռում, թունավորում, շարժվող մեխանիզմներ, էլեկտրական հարված, սայթակում և այլն),
- Նույնականացնել հնարավոր արտակարգ իրավիճակները (հրդեհ, վնասվածք, քիմիկատների և նավթամթերքի արտահոսքեր և այլն) և դրանց արագ հակազդման գործողությունները,

- Իրազեկել աշխատանքներին ներգրավված անձանց աշխատանքի անվտանգության ոլորտում իրենց պարտավորությունների և պատասխանատվության վերաբերյալ,
- Իրազեկել առաջին բուժ. օգնության սենյակների և մոտակա բժշկական հաստատությունների վերաբերյալ,
- Ապահովել շին. տեխնիկայի և տրասնպորտային միջոցների անվտանգ տեղաշարժման ուղիները:

Շինարարության փուլում հնարավոր արտակարգ իրավիճակների ազդեցության գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումներն ամփոփված են ստորև Աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. Արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Արտակարգ իրավիճակներ				
Հավանա-կանություն (A)	**Հետևանք (B)**	**Ազդեցության գնահատում (A) * (B)**	**Ազդեցության աստիճան**	**Ազդեցության մեղմացմանը նկանխարգելմանը միտված միջոցառումներ**
1	5	5	ցածր	• Շինարարական մեքենաների շահագործման պատշաճ կառավարում • Գյումրի քաղաքում բուժկենտրոնների նույնականացում՝ վնասվածք ստացած աշխատողներին հրատապ բուժօգնություն ցուցաբերելու համար • Վարորդների առողջության բուժ. զննում • Ցուղի արտահոսքից խուսափելու համար շինարարական մեքենաների տեխ. սպասարկումը իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում • Մինչ աշխատանքների մեկնարկը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատաքնի ղեկավարը • Մինչ աշխատանքների մեկնարկը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով • Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ

				պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի Գյումրու մոտակա բժշկական հաստատությունը

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Սույն Հայտում հատկորոշված են ընդհանուր բնույթի բնապահպանական միջոցառումները: Ստորև Աղյուսակ 17-ում առաջարկվում է բնապահպանական միջոցառումների ծրագիր, որում ներկայացված են նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում տարաբնույթ մեղմացնող/նվազեցնող գործողություններ/միջոցառումներ:

Աղյուսակ 17. Բնապահպանական միջոցառումների ծրագիր

Շրջակա միջավայրի հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխա-նատու	Վերահսկող	Արժեքը
1. Օդի աղտոտում	• Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող շին. տեխնիկա, բեռնատար մեքենաներ և գործիքներ • Օրվա ընթացքում շին.հրապարակի պարբերաբար ջրում • Շինանյութերի ծածկում անջրաթափանց թաղանթով • Տեղանքում շինարարական նյութերի և թափոնի բաց այրման արգելում • Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում	Կապալառու	ՊԵԿ-ի ներ-կայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
2. Ջրային ռեսուրսներ	• Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում			
3. Թափոններ	• Փորված գրունտի օգտագործում, որպես լցանյութ • Առանձին հավաքել շինարարական և կենցաղային աղբը • Կնքել պայմանագիր Գյումրու քաղաքի աղբա-հանող կազմակերպության հետ՝ կենցաղային և շինարարական աղբի հավաքման և քաղաքային աղբավայրում տեղադրման համար	Կապալառու	ՊԵԿ-ի ներ-կայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
4. Հողի աղտոտում	• Աշխատանքների ավարտից հետո տարածքի հարթեցում և բարեկարգում • Ծածկել հողաթմբերը անջրաթափանց	Կապալառու	ՊԵԿ-ի ներ-կայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ

Շրջակա միջավայրի հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխա-նատու	Վերահսկող	Արժեքը
	բրեզենտե ծածկույթով • Յուղի արտահոսքի արդյունքում հողի աղտոտումից խուսափելու համար շինարարական մեքենաների տեխ. սպասարկումը իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում			
5. Աղմուկ և թրթռում	• Կանգնեցնել շինարարական աշխատանքները գիշերային ժամերին • Շինարարական տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում • Աշխատողների համար աղմուկի մակարդակը պետք է պահպանվի 80 dB (A)-ից ցածր: Այս արժեքը գերազանցելու դեպքում աշխատողներին պետք է տրամադրվեն հատուկ պաշտպանիչ ականջակալներ	Կապալառու	ՊԵԿ-ի ներ-կայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
6. Կենսաբազ-մազանություն	• Աշխատանքների իրականացման ընթացում չօգտագործել արգելված թունաքիմիկատներ	Կապալառու	ՊԵԿ-ի ներ-կայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
7. Արտակարք իրավիճակներ	• Շինարարական մեքենաների շահագործման պատշաճ կառավարում • Գյումրի քաղաքում բուժկենտրոնների նույնականացում՝ վնասվածք ստացած աշխատողներին հրատապ բուժօգնություն ցուցաբերելու համար • Վարորդների առողջության բուժ. զննում • Յուղի արտահոսքից խուսափելու համար շինարարական մեքենաների տեխ. սպասար-կումը իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում • Մինչ աշխատանքների մեկնարկը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատաքնի ղեկավարը • Մինչ աշխատանքների մեկնարկը շինարարա-կան հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով • Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի Գյումրու մոտակա բժշկական հաստատությունը	Կապալառու	ՊԵԿ-ի ներ-կայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ

Հավելվածների մաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 22 օգոստոսի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Թբիլիսյան խճուղի թիվ 2/14

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության 16.06.2006թ. թիվ 1089-Ն և 01.08.2019թ. թիվ 979-Ա որոշումներ, 14.08.2019թ-ի գույքի հանձնման-ընդունման ակտ, ՀՀ Գյումրի համայնքի ղեկավարի 19.08.2019թ. թիվ 1495-Ա որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0412-0009
Մակերեսի չափը (հա)՝ 21.57
Նպատակային նշանակությունը՝ հատուկ նշանակության
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հատուկ նշանակության
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 22082019-08-0002, գաղտնաբառ՝ WRBACFEQGJBQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	08-001-0412-0009-001	Կիսաքանդ շինություն	979.24 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	08-001-0412-0009-002	Կիսաքանդ շինություն	979.24 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	08-001-0412-0009-003	Կիսաքանդ շինություն	979.24 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	08-001-0412-0009-004	Կիսաքանդ շինություն	1013.8 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	08-001-0412-0009-005	Կիսաքանդ շինություն	1171.16 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	08-001-0412-0009-006	Կիսաքանդ շինություն	863.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	08-001-0412-0009-007	Կիսաքանդ շինություն	600.22 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	08-001-0412-0009-008	Կիսաքանդ շինություն	2812 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
9	08-001-0412-0009-009	Կիսաքանդ շինություն	417 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10	08-001-0412-0009-010	Կիսաքանդ շինություն	68.8 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գույքն ամրացված է «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին»:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գոռ Աղաբաբյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 22082019-08-0002, գաղտնաբառ՝ WRBACFEQGJBQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Հավելված 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզ Գյումրի համայնք

(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 193 « 16 » դեկտեմբերի 2019 թ.

Օբյեկտ Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման նախագծի փոփոխում՝ վերանախագծում

(օբյեկտի անվանումը,կառուցում, վերակառուցում, ուժեղացում, կապիտալ նորոգում, ամրակայում, վերականգնում և այլն, օբյեկտի անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը)

բարձր ռիսկայնության աստիճան՝ 4-րդ կատեգորիա նախագծային փաստաթղթերի մշակման համար

ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ք. Գյումրի Թբիլիսյան խճուղի N 2/14

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 22082019-08-0002 վկայականը,տեխնիկական պայմանները, կառուցապատողի հայտը:

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասիտրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը երկու տարի

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է Հատուկ նշանակության հողեր

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 21,57 հա

հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3.Հողամասի առկա վիճակը առկա են կիսաքանդ շինություններ

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*)Տրանսպորտային պայմանները ապահովված են

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*)Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքներ

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*)Կից հողամասեր ավտոտնակներ,բնակելի տներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7.Բնության հատուկ պահպանվող և (կամ)պատմամշակութային հուշարձանների տարածք (պահպանական գոտիներ) չկան

(հուշարձանի անվանումը , կարգավիճակը և այլն)

8. (*)Հատակագծային սահմանափակումներ միջպետական ավտոմոբիլային ճանապարհ

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում արտաքին ջրահեռացումը կազմակերպել ուղղաձիգ հատակագծման միջոցով

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում Հարակից տարածքը կանաչապատել, բարեկարգել և տեղադրել գիշերային լուսավորության էլեկտրական սարքեր:

(լանդշաֆտային ճարտարապետության վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր Քար, բազալտ, երկաթ/բետոնյա և մետաղյա կոնստրուկցիաններ, մետաղ, ապակի, փայտ, թիթեղ,պեմզաբետոնի բլոկներ:

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջակությունները)

16.Պաշտպանական կառույցներ ըստ նորմատիվ պահանջների

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17.Հակահրդեհային պահանջներ նորմատիվ պահանջների համաձայն

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ նախատեսել միջոցառումներ հաշմանդամների և սակավաշարժուն մարդկանց սպասարկումը ապահովելու համար

19.Շրջակա միջավայրի պահպանում Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցներ:

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20.Շինարարության կազմակերպում շինաշխատանքների կազմակերպման նախագծի և ժամանակացույցի համաձայն

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը երկու տարի, աշխատանքային

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22.Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ Համալիր փորձաքննություն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտի վրա)

23.Միջանկյալ համաձայնեցում օրենքով սահմանված կարգով

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էքսիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24.Հասարակական քննարկումներ օրենքով սահմանված կարգով

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25.Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում օրենքով սահմանված կարգով

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Կից պայմաններ

ՔՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Մշակել Գյումրի քաղաքում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման նախկինում հաստատված նախագիծը ենթարկել փոփոխման՝ վերանախագծման միջոցով:
Նախատեսել ծառայողական շենք՝ 30 բնակարանի համար 3 վերգետնյա հարկերով և կիսանկուղով:

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1 (*)օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից(մետր) կառուցապատման նախագծի համաձայն

9.2 (*)հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) նորմերի համաձայն

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) մինչև 16 մ

9.4 կառուցապատման խտության գործակիցը _____
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5 կառուցապատման տոկոսը համաձայն նախագծի
(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝%)

9.6 կանաչապատման տոկոսը համաձայն նախագծի
(կանաչապատման տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝%)

9.7 այլ պահանջներ օրենքով սահմանված կարգով

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների ներթականությունը քանդել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում նշված կիսաքանդ շինությունները ամբողջ ծավալով

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները _____

12. (*)Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում	Համաձայն «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանների (համաձայն մատակարարող կազմակերպությանտեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Համաձայն <<Էլցանցեր>> ՓԲԸ <<Ղարս>> մասնաճյուղի կողմից տրված տեխնիկական պայմանների (համաձայն մատակարարող կազմակերպությանտեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Համաձայն «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ - ի կողմից տրված տեխնիկական պայմանների համաձայն մատակարարող կազմակերպությանտեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	Կցվում է _____ (համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	_____
12.6 աղբահանություն	Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին

Հավելված 3

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1 - ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ
2 - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ
3 - ՌԵՆՏԳԵՆ ԶՆՆՄԱՆ ԿԱՅԱՆ
4 - ՄԱՔՍԱՅԻՆ ԶՆՆՄԱՆ ԿԱՅԱՆ
5 - ՃՈ ԶՆՆՄԱՆ ԿԱՅԱՆ
6 - ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԿԱՅԱՆ
7 - ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՅԱՆ
8 - ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
9 - ԷԼ. ԵՆԹԱԿԱՅԱՆ
10 - ՀՍԿԻՉ ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ԿԵՏ
11 - ՏԻՐԱԶՈՒՐԿ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ
12 - ՄԱՐԴԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ
13 - ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ
14 - ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ
15 - ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ - 5,8 հա
ԿԱՌՈՒՑՅՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ - 5150քմ
ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ - 1500քմ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ - 554հատ

Հավելված 4

Իրադրային հատակագիծ

Հավելված 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

N _____

«__14__» 10_____2019թ .

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ
պրն. Դ. Անանյանին

Հարգելի պարոն Անանյան

Համաձայն "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի հոդված 16-ի, ինչպես նաև հիմնվելով 08.11.2019թ.-ին Գյումրիում տեղի ունեցած "Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցում"աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արդյունքների վրա, իմ նախնական համաձայնությունն եմ տալիս վերոնշյալ նախագծի իրականացմանը:

Հարգանքով՝ **Սամվել Բալասանյան**

Կատարող՝ Հ Գասպարյան